



Ուր. 11 Մարտ. - Երեկոյեան ժամը 7-ին, Պատրիարքարան այցելեցին Երուսաղէմի Հ.Ե.Մ-ի նորընտիր վարչականները, ատենապետ Տիար Յակոբ Գալայճեանի ողնկցութեամբ, եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Գշ. 22 Մարտ. - Պահայիներու Նովրուզի (Նոր Տարի) աղիթով տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Տ. Արիս Արք. Շիրվանեան եւ Տ. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան:

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-ին Երուսաղէմի Անկլիքան եկեղեցոյ Արքեպս. Գերշ. Տ. Սուիէլ Տաւումի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Գշ. 22 Մարտ. - Ս. Յարութեան Տաճարին մէջ, Քրիստոսի Ս. Գերեզմանին առջեւ, երեք համայնքներու հոգեւոր պետերու կողմէ կարդացուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանի նորոգութեան մասին ընդհանուր յայտարարութիւնը:

Ուր. 25 Մարտ. - Երեկոյեան ժամը 5-ին, Պատրիարքարան այցելեցին Յեղասպանութեան 100-ամեակի Միացեալ Յանձնախումբի անդամ-անդամուհիները եւ հանդիպում ունեցան Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Պատրաստեց՝ Ներսէս Արդ. Ալոյեան



ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԿԵԱՆՔ



ՅՈՒՆՈՒՄԱՐ 2016

Շաբաթ, 2 Յունուար. - «Նախապկայ եւ ի Քրիստոս անդրանիկ հաւատացեալ բազաւորին մերոյ Սրբոյն Արքարոս». Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ: Ժամարարն էր Տ. Գեորգ Արդ. Հայրապետեան:

Կիրակի, 3 Յունուար. - Ե. Կիրակի Յիսնակի. գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ: Ժամարարն էր Տ. Ներսէս Արդ. Ալոյեան:

Երկուշաբթի, 4 Յունուար. - Կէսօրէ ետք Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ պաշտուեցաւ յաջորդ օրուայ տօնին նախատօնակը՝ նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր:

Երեքշաբթի, 5 Յունուար. - «Սրբոցն Դաւթի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր առաքելոյն». գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան եպիսկոպոսական խոյր ի գլուխ պատարագեց եւ յաւոր պատշաճի քարոզեց: Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգրստեան պաշտօն Ս. Աթոռի հանգուցեալ պատրիարքներու հոգոյ փրկութեան համար:

Չորեքշաբթի, 6 Յունուար. - Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ Տ. Սեւան Արք. Դարիպեան նախագահեց Ս. Ստեփանոսի հանդիսատր նախատօնակին: Տօնին բուրվառակիրներն էին Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան եւ Տ. Տիրան Արդ. Յակոբեան:

Հինգշաբթի, 7 Յունուար. - «Սրբոյն Ստեփանոսի Նախապկային եւ առաջին մարտիրոսին»: Այս տարի Ս. Ստեփանոսի տօնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետացի մէջ մեծ շուքով: Պաշտուեցան գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ: «Փառք ի Բարձունս»էն սկսեալ մինչեւ ժամերգութեան աւարտը

երկու սարկաւագներ եւ տասնչորս ուրարակիրներ, խոհուրագարդ սաղաւարտներով եւ ոսկեթել շապիկներով, տապանակ եւ բուրվառ ի ձեռին, առաջնորդութեամբ երկու խնկարկու վարդապետներու, պանծացուցին յիշատակը իրենց մարտիրոսին: Հանդիսութեան կը նախագահէր Ս. Սեւան Արք. Ղարիպեան, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Ս. Էմմամնուէլ Վրդ. Աթաջանեան:

Ուրբաթ, 8 Յունուար. - Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ կատարուեցաւ յաջորդ օրուայ նախատօնակ: Նախագահեց Ս. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 9 Յունուար. - «Սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի»: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Ս. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Կիրակի, 10 Յունուար. - Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ, որմէ յետոյ Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարի մեր Վերնամատրան մէջ. ժամարարն էր Ս. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Սեւան Արք. Ղարիպեան:

Կէսօրէ վերջ Ամեն. Պատրիարք Հայրը մուտք գործեց Ս. Հրեշտակապետաց եկեղեցի եւ նախագահեց երեկոյեան ժամերգութեան եւ յաջորդ օրուայ տօնի մեծահանդէս նախատօնակին:

Երկուշաբթի, 11 Յունուար. - «Սրբոց Որդւոցն Որոտման՝ Յակոբայ առաքելոյն եւ Յովհաննու աւետարանչին»: Առաւօտեան ժամերգութենէն ետք մատուցուեցաւ Ս. Պատարագ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ: Եպիսկոպոսական խոյր ի գլուխ պատարագեց եւ քարոզեց Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Հինգշաբթի, 14 Յունուար. - «Տաբեմուտ 2016 թուականին Քրիստոսի (ըստ հին տոմարի): Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ: Տարիներու սովորութեան համաձայն, պատարագեց եւ քարոզեց Տաճարի տեսուչ Ս. Դեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Շաբաթ, 16 Յունուար. - «Սրբոցն Բարսղի Հայրապետին եւ եղբօր նորա՝ Գրիգորի Նիսացոյն, Սեղբեստրոսի՝ Հռոմայ

Հայրապետին եւ արքա Եփրեմի Խորին Ասորոց»: Սուրբ Պատարագ մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ, ժամարարն էր Ս. Բագրատ Վրդ. Պուրճեքան:

Կիրակի, 17 Յունուար. - Է. Կիրակի Յիսնակի. առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ, որմէ յետոյ միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարի մեր վերնամատրան մէջ. ժամարարն էր Ս. Կորին Վրդ. Բաղդասարեան: Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Երկուշաբթի, 18 Յունուար. - «Շրագալոյց Ս. Ծննդեան». առաւօտեան ժամը 9:45-ին Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը Մայրավանքի դռնէն ինքնաշարժներու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Ս. Ծննդեան քաղաքը՝ Բեթղեհէմ: Դամբուկէսին դիմաւորուեցան շրջանի քաղաքապետին, ոստիկանապետին եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներու եւ անձնավորութիւններու, ինչպէս նաեւ հայ գաղութի ներկայացուցիչներու կողմէ: Զինուորական զանազան պատիւներու արժանանալէ ետք, պատկառելի այս թափօրի հովանաւորութիւնը ստանձնեց Պաղեստինի կառավարութիւնը: Թափօրը ժամը 11:00-ին հասաւ Ս. Ծննդեան վանուց հրապարակը, ուրկէ «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ եւ զանգերու դօղանջներու ընդմէջէն ուղղուեցաւ Տաճարի մեր Տեսչարանը:

Կէսօրէ վերջ ժամը 2:00-ին Ամեն. Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Ծննդեան Տաճար: Ս. Այրի ուխտէն ետք, տաճարի մեր բաժնին մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Շրագալոյցի արարողութիւնը, որոնց աւարտին Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Այրին մէջ: Պատարագեց եւ քարոզեց Ս. Ասպետ Վրդ. Պալեան: Ապա Սրբազան Պատրիարքը նախագահեց Ս. Ծննդեան մեծահանդէս նախատօնակին: Արարողութիւնները վերջ գտան մայրամուտին, երբ Միաբանութիւնը, զգեստաւորուած եւ երգեցողութեամբ, սինազարդ գաւիթէն անցնելով բարձրացաւ Ս. Ծննդեան վանքի հայկական բաժինը ընթրիքի:

Գիշերուան ժամը 10-ին Միաբանութիւնը արթուն է դարձեալ՝ սկսելու համար գիշերային պաշտամունքը՝ Տաճարի հայկա-

կան բաժնին մէջ:

Երեքշաբթի, 19 Յունուար. - «Ծնունդ եւ Յայտնութիւն». գիշերը ժամը 10-ին Տաճարի մեր բաժնին մէջ պաշտուեցան գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները «Փառք ի բարձունս»-էն մինչեւ վերջ արարողութիւնը կատարուեցաւ Ս. Այրին մէջ: Արարողութիւններէն մաս մը մէկ ժամ տեւողութեամբ ձայնասփռուեցաւ պաղեստինեան հեռուստատեսիլի վրայ, որու ընթացքին Ամենապատիւ Պատրիարք Հայրը տուաւ իր պատգամը հայերէն եւ արաբերէն լեզուներով, որ ուղղուած էր Հայաստանեայց եկեղեցւոյ բոլոր զաւակներուն ի սփիւռս աշխարհի, ապա վերադարձաւ Երուսաղէմ, իսկ մնացեալ արարողութեան նախագահեց Լուսարարապետ՝ Ս. Սեւան Արք. Դարիպեան: Գիշերը Տաճարի մեր բաժնին մէջ պատարագեց եւ քարոզեց Ս. Բագրատ Վրդ. Պուրճեքեան: Կատարուեցաւ «Ջրօրհնեաց» արարողութիւն: Առաւօտեան դէմ Ս. Այրին մէջ պատարագեց եւ քարոզեց Ս. Սեւան Արք. Դարիպեան: Առաւօտեան ժամը 6-ին Միաբանութիւնը երկրորդ անգամ ըլլալով երգերով անցաւ Տաճարի սինագարդ գալիքով եւ բարձրացաւ հայկական մեր բաժինը: Արարողութիւնները վերջ գտան մեր բաժնին մէջ կատարուած Աւետարանի ընթերցումով:

Սոյն արարողութեանց, ըստ աւանդութեան ներկայ եղան Պաղեստինի նախագահ Տիար Մահմուտ Աբբաս, բարձրաստիճան զինուորականներ, ոստիկաններ, Թերթեհէմի քաղաքագլուխը եւ այլ բարձրաստիճան պետական այրեր:

Միաբանութիւնը յաջորդ օրը վերադարձաւ Երուսաղէմ առաւօտեան ժամը 8:00-ին:

Երուսաղէմի Ս. Ծննդեան արարողութիւնները կատարուեցան Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Ըստ սովորութեան պատարագեց Տաճարի Տեսուչ Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ս. Պատարագը կատարուեցաւ Գերեզմանի առջեւ: Ապա «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ թափօր դարձան Գերեզմանի շուրջ եւ մեր տեսչարանին մէջ վերջ գտան արարողութիւնները Ծննդեան Աւետարանի ընթերցանութեամբ եւ «Փառք ի բարձունս»ի երգեցողութեամբ:

Դարձեալ Երուսաղէմի մէջ առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Պատարագեց եւ

քարոզեց Տաճարի Տեսուչ Ս. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Պատարագէն վերջ տեղի ունեցաւ «Ջրօրհնեաց» արարողութիւնը՝ նախագահութեամբ Ս. Արիս Արք. Շիրվանեանի: Ի բացակայութեան Ժառանգաւորաց սաներու,



երգեցողութիւնները կատարուեցան Կ. Պոլիսէն եկած երգչախումբի կողմէ:

Չորեքշաբթի, 20 Յունուար. - «Յիշատակ մեռելոց»: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Պատարագեց եւ քարոզեց Ս. Տիրան Արք. Յակոբեան, ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ ընդհանուր մեռելոց համար:

Շաբաթ, 23 Յունուար. - Ժամերգութենէն վերջ կատարուեցաւ Ս. Պատարագ. պատարագեց Կ. Պոլիսէն ժամանած Ս. Շնորհք Արք. Տօնիկեան:

Կիրակի 24 Յունուար. - Զ. օր Ծննդեան: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Ս. Վազգէն Արք. Ալեքեան:

Երկուշաբթի, 25 Յունուար. - Է. օր Ծննդեան: Յաջորդ օրուայ նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց՝ նախագահեց Ս. Սեւան Արք. Դարիպեան:

Երեքշաբթի, 26 Յունուար. - Ը. օր Ծննդեան եւ «Տօն Անուանակոյութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ապա ժամը 8:30-ին Ս. Սեւան Արք. գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մատուցուեցաւ հանդիսատար Ս. Պատարագ՝ Քրիստոսի Գերեզմանին վրայ: Եպիսկոպոսական խոյր ի գլուխ պատարագեց Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Վանք վերադարձին, Հայոց թաղի մուտքին, «Լոյս ի լուսոյ» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւն եւ ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան, ու Ամեն. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Տնօրհնէք» ի արարողութիւն: Օրհնուեցան Ս. Աթոռոյս բարիքները: Այնուհետեւ թափօրը, գլխատրութեամբ վանուս ժամօրհնող հոգշ. Հօր, մեկնեցաւ վանքի մառանը, խոհանոցը եւ սեղանատունը, հոն եւս կատարելու համար նոյն արարողութիւնը. օրհնուեցաւ նաեւ օրուան յատուկ հերիսայի աւանդական ճաշը:

Չորեքշաբթի, 27 Յունուար. - Յաջորդ օրուայ նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցի, նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Հինգշաբթի, 28 Յունուար. - «Տօն Ծննդեան Յովհաննոս Կարապետին»: Ժամերգութիւններ պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Մագսուտեան:

Շաբաթ, 30 Յունուար. - «Սրբոցն՝ Պետրոսի Հայրապետին, Վլլասայ Եպիսկոպոսին եւ Արիստղոմայ սարկաւագին»: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ. ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէրճեան:

ՓԵՏՐՈՒԼԱՐ

Շաբաթ, 6 Փետրուար. - «Սրբոց Հայրապետացն՝ Աբանասի եւ Կիրիլի»: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ: Ժամարարն էր Տ. Անտիս Վրդ. Իփրաճեան:

Կիրակի, 7 Փետրուար. - Բ. Կիրակի զկնի Ծննդեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ, ապա թափօրով Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարի մեր Վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Թէոփրոս Վրդ. Զաքարեան: Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Շաբաթ, 13 Փետրուար. - «Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին»: Ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ: Մատուցուեցաւ Ս. Պատարագ. ժամարարն էր Տ. Գեորգ Արք. Հայրապետեան:

Կիրակի, 14 Փետրուար. - Գ. Կիրակի զկնի Ծննդեան: Բարեկենդան Առաջաւորի Պահոց: Գիշերային ժամերգութիւնը կատար-

ւեցաւ Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ, որմէ յետոյ Միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարի մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պորճեան: Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 20 Փետրուար. - «Սրբոց որդոց եւ թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակէսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի»: Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Ս. Գլխաղորի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 21 Փետրուար. - Դ. Կիրակի զկնի Ծննդեան: Բարեկենդան Առաջաւորի պահոց: Գիշերային ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Յակոբ Մայր Տաճարին մէջ, որմէ յետոյ Միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. պատարագը մատուցուեցաւ մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պորճեան. երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 26 Փետրուար. - Կէսօրէ վերջ Մայր Տաճարի մէջ պաշտուեցաւ Տեառնընդառաջի մեծահանդէս նախատօնակը, ապա կատարուեցաւ «Անդաստան». արարողութեանց կը նախագահէր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Գիշերուան սկիզբին, Մայր Տաճարի մէջ պաշտուեցան «Եկեացէ» ի եւ հսկման արարողութիւնները. հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 27 Փետրուար. - «Տեառնընդառաջ»: Տօն քառասօրեայ զալստեանն Քրիստոսի ի Տաճարն: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Մայր Տաճարի մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Աւագ Խորանի վրայ: Եպիսկոպոսական խոյր ի զլուխ պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Տ. Պարեո Ծ. Վրդ. Երեցեան:

Կիրակի, 28 Փետրուար. - «Ե. Կիրակի զկնի Ծննդեան»: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մայր Տաճարի մէջ, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ Աւագ Խորանի աջակողմը գտնուող Յովհաննոս Կարապետի անուան խորանի վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան:

Կէսօրէ ետքը յաջորդ օրուայ տօնին նախատօնակին, ի Ս. Յակոբ, նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 29 Փետրուար. - «Սրբոց Առումեանց զօրավարացն եւ սրբոցն Սարգսի Զօրավարին եւ որոյոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինուորացն»: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յակոբ, որմէ յետոյ Ս. Պատարագ մատուցեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի հնադարեան մատարան մէջ. ժամարարն էր Տ. Դեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Ըստ սովորութեան, Ս. Պատարագէն վերջ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթորոյս մեծամուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի հօր՝ Սարգիս Կիւլպէնկեանի, Գալուստ Կիւլպէնկեանի եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն հոգիներուն համար:

ՄԱՐՏ

Շաբաթ, 5 Մարտ. - «Սրբոյն Իսահակայ Պարբէ Լայրապետին մերոյ»։ Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Ս. Գլխադրի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 6 Մարտ. - Զ. Կիրակի զկնի Ծննդեան. Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարի մեր վերնամատարան մէջ, ժամարարն էր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան: Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Չորեքշաբթի, 9 Մարտ. - Յաջորդ օրուայ Վարդանանց տօնի հանդիսատւոյ նախատօնակը պաշտուեցաւ Ս. Յակոբ Մայր Տաճարին մէջ՝ նախագահութեամբ Տ. Սեւան Արք. Դարիպեանի:

Հինգշաբթի 10 Մարտ. - «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որ կատարեցան ի մեծի պատերազմին»։ Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Մայր Տաճարին մէջ: Աւագ սեղանն վրայ, օրուան հանդիսատւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց, ըստ սովորութեան, Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ Տ. Թեոդորոս Վրդ. Զաքարեան: Քարոզէն ետք, «Լայր մեր»էն առաջ, Տ. Սեւան Արք. Դարիպեան նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Բ.ի անուան տօնին առթիւ կատարուած հայրապետական մաղթանքի արարողութեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն մեր

ժողովուրդի համայն ննջեցեալներու համար:

Ուրբաթ, 11 Մարտ. - Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ: Ըստ իրաւական սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Ուղղափառ Ասորոց Ս. Մարկոս Անտարանչի եկեղեցւոյ մէջ: Պատարագէն եւ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէճեան: Ս. Պատարագէն ետք Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորոց Եպիսկոպոսի կողմէ եւ երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

Շաբաթ, 12 Մարտ. - «Կոստանդնուպոլսոյ Ս. Ժողովոյն եւ հարիւր յիսուն Հայրապետացն»։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատարան մէջ. ժամարարն էր Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Մագսուտեան:

Ըստ սովորութեան երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Մայր Տաճարի խորաններն ու սրբանկարները վարագործուեցան:

Կիրակի, 13 Մարտ. - Ա. Կիրակի Քառասնորդաց: Բուն Բարեկենդան: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնների պաշտուեցան Ս. Յակոբ Մայր Տաճարին մէջ: Փակեալ խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Բարսեղ Վրդ. Գալեմտեբեան: Քարոզեց Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Մագսուտեան, որ խօսեցաւ Բարեկենդանի տօնի իմաստին մասին եւ շշտեց ապաշխարութեան կարեւորութիւնը:

Չորեքշաբթի, 16 Մարտ. - Սկիզբ կարգաց Մեծ Պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարի մէջ կատարուեցաւ «Արեւագար»ի առաջին ժամերգութիւնը:

Հինգշաբթի, 17 Մարտ. - Իրիկուան ժամը 7:00-ին, Մայր Տաճարի մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Եկեցէ»ի առաջին ժամերգութիւնը, որուն ընթացքին քարոզեց Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուրբաթ, 18 Մարտ. - Յաջորդ օրուայ նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանք, Ս. Թորոս եկեղեցւոյ (Զեռագրաց Մատենադարան Ս. Աթորոյ). Հանդիսապետն էր Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը:

Շաբաթ, 19 Մարտ. - «Ս. Թեոդորոսի Զօրավարին»։ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Թորոս. Ժամարարն էր Տ. Թեոդորոս Վրդ. Զաքարեան:

Կէսօրէ ետք յաջորդ օրուան Արտաքսման Կիրակիի առթիւ, Տ. Սեւան Արք. Դարիպ-

եան, ի գլուխ միաբանութեան, «Հրաշափառ» ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր նախագահեց մեր Վերնատան մէջ պաշտուած երեկոյեան ժամերգութեան ու պաշտօնական գնացքով վերադարձաւ Մայրավանք: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Ս. Յարութեան Տաճարէն ներս: Թափօրապետն էր Ս. Թէոդորոս Վրդ. Չաքարեան:

Կիրակի, 20 Մարտ. - Բ. Կիրակի Քառասնորդաց, Արտաքսման: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան Տաճարին մեր Վերնամատրան մէջ: Կարճ դադարէ ետք մատուցուեցաւ Ս. Պատարագ նոյն Վերնամատրան մէջ: Ժամարարն էր Ս. Շնորհք Աբղ. Բալոյեան: Քարոզեց Ս. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աբրոնի նախկին միաբան Ս. Դաւիթ Աբր. Մանուկեանի, ինչպէս նաեւ Ս. Եղիշէ Աբր. Կիզիբեանի: Դամբանական խօսեցաւ Ս. Արիս Աբր. Շիրվանեան: Ապա կատարուեցաւ եռահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատապատեղոյն շուրջ՝ գլխաւորութեամբ Ս. Սեւան Աբր. Ղարիպեանի:

Հինգշաբթի, 24 Մարտ. - Երեկոյեան Մայր Տաճարի մէջ պաշտուած հսկումին քարոզեց Ս. Սեւան Աբր. Ղարիպեան:

Շաբաթ, 26 Մարտ. - «Սրբոյն Կիրողի Երուսաղէմացի Հայրապետին եւ միւս Կիրողի Եպիսկոպոսին եւ մօրն նորա Աննայի»: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիրողի սեղանին վրայ, ժամարարն էր Ս. Գեորգ Աբղ. Հայրապետեան: Սուրբ Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Սուլբանի, Կարինի եւ ծնողացն Կարապետի եւ Մարիի եւ Կիրեղեան գերդաստանի բոլոր ննջեցեալներու հոգիներու հանգստութեան համար:

Կիրակի, 27 Մարտ. - Գ. Կիրակի քառասնորդաց: Անառակին: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցոյ մէջ, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Ս. Վանիկ Վրդ. Մանկասարեան. Քարոզեց Ս. Էմմանուէլ Վրդ. Աթաջանեան:

Հինգշաբթի, 31 Մարտ. - Երեկոյեան Մայր Տաճարի մէջ պաշտուած հսկումին քարոզեց Ս. Արիս Աբր. Շիրվանեան:



Յորդանան գետի ափին